ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018թ. մարտի 15-ից 17-ը Գերմանիայի Դաշնային Հանրապետություն կատարած գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**

Արմեն Հայրապետյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Գործուղման վայրը և ժամկետները՝

Քաղաք Մայնի Ֆրանկֆուրտ, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, 2018 թվականի մարտի 15-17-ը

3. **Հրավիրող կողմը՝**

Վերականգնման վարկերի բանկ

4. **Գործուղման նպատակը՝**

Մասնակցություն «Վերականգնվող էներգետիկա» (ԳՀՀ-ՎԷ) ծրագրի Դիտորդ խորհրդի 25-րդ և «Մասնավոր միկրո, փոքր և միջին ձեռներեցության աջակցում» (ԳՀՀ-ՄՓՄՁ) ու «Բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացում» (ԳՀՀ-ԲՖ) և «Գյուղատնտեսության Ֆինանսավորում» (ԳՀՀ-ԳՖ) ծրագրերի Դիտորդ խորհրդի 35-րդ համատեղ նիստին:

5. **Քննարկված թեմաները՝**

Մայնի Ֆրանկֆուրտում տեղի ունեցած Դիտորդ խորհրդի նիստի հիմնական նպատակն էր՝ քննարկել Գերմանահայկական հիմնադրամի ընթացիկ գործունեությունը: Մասնավորապես՝ հանդիպման ընթացքում քննարկվեցին KfW բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում ԳՀՀ ԾԿԳ հիմնարկի 2017թ. ծախսերի կատարողականը և հաստատվեց 2017թ. ԳՀՀ հաշվետվությունը: Հիմնադրամի նիստի ընթացքում ներկայացվեցին Վերականգնվող էներգետիկայի ծրագրի առաջընթացը, ըստ որի Ծրագրի շրջանակներում ԳՀՀ հիմնադրամի

կողմից իջեցված դրամային 9.5% և դոլարային 5.5% տոկոսադրույքով վարկերը էապես նպաստել են ծրագրի առաջընթացին: Հիմնադրամի նիստի ընթացքում քննարկվեց նաև մինչև 500կվ հզորություն ունեցող արևային կայանների ֆինանսավորման հարցը, որը համահունչ է 2017թ. դեկտեմբերին ԱԺ կողմից ընդունված «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններին:

Նիստի ընթացքում քննարկվեց Բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացման ծրագրի առաջընթացը, հաստատվեց հիփոթեքային վարկավորման 7.5% վերաֆինանսավորման տոկոսադրույքը և գյուղական ու էներգետիկայի արդյունավետության հիփոթեքային վարկավորման 6.25% վերաֆինանսավորման տոկոսադրույքը: Հաստատվեց նաև վերաֆինանսավորման տոկոսադրույքների մեթոդաբանությունը:

Նիստի ընթացքում քննարկվեցին «Մասնավոր միկրո, փոքր և միջին ձեռներեցության աջակցում» ծրագրի առաջընթացն ու հաստատվեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը 8%-ի չափով, քննարկվեց «Գյուղատնտեսության ֆինանսավորում» ծրագրի առաջընթացը, ավարտված գնահատման արդյունքներն ու որոշվեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը 6.25% անփոփոխ թողնելու հարցը, ինչպես նաև քննարկվեց ՓՄՁ էներգաարդյունավետության ծրագրի առաջընթացն ու որոշվեց վերաֆինանսա-վորման տոկոսադրույքը 7% անփոփոխ թողնել:

Հանդիպման ընթացքում քննարկվեց Գերմանահայկական հիմնադրամի աուդիտի թիմի կողմից իրականացված աուդիտի արդյունքների մասին հաշվետվությունը. մասնավորապես, ներկայացվեց Ամերիաբանկում, Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկում և Արարատբանկում կատարված աուդիտի արդյունքներն ու տրված առաջարկությունները որոշակի հարցերի առնչությամբ:

Նիստի ընթացքում առաջարկվեց նաև առաջիկա Ֆինանսական և տեխնիկական համագործակցության հայ-գերմանական միջկառավարական հանձնաժողովի շրջանակներում քննարկել Բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի ծրագրի 5-րդ փուլի իրականացման հնարավորությունը՝ 20 մլն եվրոյի չափով,

Վերականգնվող էներգետիկայի ծրագրի 4-րդ փուլի իրականացման հնարավորությունը և նոր Առևտրի ֆինանսավորման ծրագրի իրականացման հնարավորությունը 15-20 մլն եվրոյի ֆինանսավորման շրջանակներում:

Դիտորդ խորհուրդը քննարկեց օրակարգով նախատեսված բոլոր հարցերն ու ամփոփեց դրանք:

Այցի շրջանակներում ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Արմեն Հայրապետյանը երկկողմ հանդիպում է ունեցել նաև ՎՎԲ տարածաշրջանային տնօրեն Օլաֆ Զիմելկայի հետ: Հանդիպման ընթացքում, ի թիվս այլ հարցերի, անդրադարձ է կատարվել նաև Ֆինանսական և տեխնիկական համագործակցության հայ-գերմանական միջկառավարական հանձնաժողովի առաջիկա նիստի անցկացմանը: Գերմանական կողմից նշվեց, որ արդեն իսկ ձևավորվել է նոր կառավարություն և ս.թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին միջկառավարական հանձնաժողովի հերթական նիստի անցկացումը համարվում է հնարավոր:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին նաև 2016թ. համար հայ-գերմանական ֆինանսական համագործակցության շրջանակային համաձայնագրի նախագծի վերաբերյալ հայկական կողմի առաջարկները:

Շոշափվեցին նաև երկկողմ հետագա համագործակցության ընդլայնման հնարավորություններին և ուղղություններին առնչվող հարցեր:

7. Գործուղվողը՝

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Արմեն Հայրապետյան